# Արձանագրություն N 3

## «ՍՄ-ՀԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան

«22» հուլիս 2020թ.
ժամը 15:00

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝

Վ.Վարդանյան - ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի ծրագրերի պատասխանատու

Անդամներ՝ Մ.Մկրտչյան-ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավարի տեղակալ

Ա.Մարտիրոսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ

Ա.Արզումանյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան--գնումների համակարգող

1. «ԲԵՍԹ ՌՈՈՒԴ»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է բացման նիստում արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացրել է հրավերով պահանջված, սակայն հայտում բացակայող փաստաթղթերը՝ հավելված 1-ը և լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

2. Ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը, հանձնաժողովը որոշեց «ՀԻԴՐՈ»ՍՊԸ-ի և «ԲԵՍԹ ՌՈՈՒԴ»ՍՊԸ-ի հայտը գնահատել «բավարար»:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

3. Քանի որ ՍՄ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի կարգի համաձայն նիստը կասեցվել է ՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման համար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

4. Հանձնաժողովը որոշեց.

- բանակցությունների նիստը հրավիրել սույն թվականի **հուլիսի 27-ին ժամը 11:00-ին, որը** տեղի կունենա ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Սյունիքի մարզպետարան հասցեում:
- հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

5.Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա սույն թվականի հուլիսի 27-ին ժամը 11:00-ին ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Գ.Նժդեհի 1 ՀՀ Սյունիքի մարզպետարան հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------- Վ.Վարդանյան

Անդամներ՝ ---------------- Մ.Մկրտչյան

---------------- Ա.Մարտիրոսյան

---------------- Ա.Արզումանյան

Քարտուղար՝ ---------------- Ս.Գրիգորյան